

ԱՐՈՎՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՎԵՐՆԵԼՔԸ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹ

Բանասիր. գիտ. դոկտոր Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

1

Այս ուղեորությունը հայ բնաշխարհի նահապետ լեռան երկրաբանական ուսումնասիրության առումով նոր բան չտվեց, մանավանդ որ նախաձեռնողը մի անգլիացի լորդ էր, իսկ նպատակը՝ մասնավոր հետաքրքրասիրություն, մինչդեռ վերելքին ուղեկցող հանգամանքները և նրան վերաբերող պաշտոնական վավերագրերն ու հուշագրությունները հնարավորություն են ընձեռում ավելի խոր թափանցելու Արավյանի ներաշխարհը, ճանաչելու նրա առերես բարեկամներին, ականատես դառնալու օրավուր խորացող նրա հոգեկան դրամային:

Շուրջ մեկուկես տասնամյակ առաջ առիթ ենք ունեցել գրելու, որ ընդհանրապես, անձիշտ պատկերացումներ են եղել անգլիացի միլիոնատեր ու ճանապարհորդ Հենրի Դեմբի Սեյմուրի (Henry Danby Seymour) և հայ մեծ գրողի փոխհարաբերությունների վերաբերյալ, ինչպես նաև ճիշտ չի թվագրվել նրանց հանդիպման տարին¹: Սխալների պատճառը, մեր կարծիքով, Կ. Կոստանյանցի «Հայագիտությունն Արևմտյան Եվրոպայում» (Թիֆլիս, 1910) գրացուցակի տեղեկանքներից մեկն է եղել, որից կառչելով, բայց և որը խնամքով թաքցնելով՝ անցյալի որոշ ուսումնասիրողներ հավատացել են, թե Սեյմուրը հետագայում հրատարակել է իր՝ 1845 թ. (sic!) արարատյան վերելքի նկարագրությունը, և չնայած ապարդյուն՝ երկար, շատ երկար որոնել են այդ, ըստ էության, անգո գրքին, մինչդեռ հարկ էր ուշադրությամբ կարդալ համապատասխան տեղեկանքը, աչքից անցկացնել վկայակոչված աղբյուրները, և սխալը միանգամից մեջտեղ կգար:

Ինչ չեն արել անցյալում, պետք է այժմ անել, տասնամյակների թյուրիմացության պարզաբանումն սկսելով Կոստանյանցի կազմած մատենագիտա-

¹ Տե՛ս ևս. Արավյան, Երկրի լիակատար ժողովածու, հատ. VII, Երևան, 1956, էջ 457—458 (ծանոթագրություններ):

² Առաջինը Ե. Շահազիզն է, որ հիշատակել է այդ երբեք գոյություն չունեցող գիրքը, մշտցրել այն Արավյանին վերաբերող գրականության ցանկի մեջ և, չգիտես ինչից դրգված, կազմել հայերեն տիտղոսաթերթ:

Սեյմուր, վերելք Արարատ 1845 թվի, Լոնդոն, 1877 (տե՛ս «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», № 3, 1928, էջ 167): Հաջորդը Ա. Հովհաննիսյանն է, որը ծանոթ լինելով հանդերձ Շահազիզի գրածին և Կոստանյանցի մատենագրական ցուցակին, իր հերթին կազմել է անգլերեն նոր տիտղոսաթերթ. H. D. Seymour; His few lines about his ascent of Ararat. London, 1877: Ընդ որում, երկուսն էլ բառ իսկ չեն ասել, թե հրապարակ հանելով այդ անգո գիրքը (հայերեն թե անգլերեն), ի՞նչ հիմքեր են ունեցել: Սեյմուրի անգո գիրքը շփոթեցրել է նաև Եվրոպա-հայկական մատենագիտության կազմողներին, որոնցից վերջինը՝ Ա. Սալմասըլյանը, իր «Հայկական մատենագիտության» մեջ (Երևան, 1969, էջ 271) տեղ է տվել դրան և առանց ստուգելու արտագրել Կոստանյանցի տեղեկանքը:

կան տեղեկանքի (տեղավորված է նրա գրքի 122-րդ էջում) հանգամանալից քննությամբ: Դա հետևյալն է.

Seymour H. D.. His few lines about his ascent of Ararat in 1845, London, 1877. [Սեյմուր Հ. Դ., նրա մի քանի տողը 1845 թ. իր վերելքի մասին դեպի Արարատ, Լոնդոն, 1877]:

Սեյմուրը, գոնե, լավ պիտի իմանար, որ ինքն Արարատի գագաթ է բարձրացել ո՛չ թե 1845, այլ 1846 թ. սեպտեմբերին և աշխատության խորագրի մեջ վերելքի տարին ձիշտ մատնանշեր, որ, չգիտես ինչու, չի արել: Նա, ինչպես երևում է մեջբերված տողերից՝ կանոնավոր վերնագիր էլ չի դրել: Ինչևէ, առայժմ մի կողմ թողնենք այդ տարօրինակ սխալները և առաջ անցնենք, քանի որ հիշյալ կասկածելի տեղեկանքից անմիջապես հետո Կոստանյանցն արել է հղում՝ Վ. (իմա՛ vide, այսինքն՝ տե՛ս) Frechfeld (=Freshfield D. W.), որպիսի աղգանվան տակ նույն գրքի 48-րդ էջում գտնում ենք մի ուրիշ աշխատության խորագիր՝ „Early ascent of Ararat“, տպագրված Լոնդոնի „Alpine Journal“-ի 1877 թ. տարեգրքում: Տարօրինակ է նաև այն, որ հիշյալ տեղեկանքից հետո էլ արված է հակադարձ հղում՝ V. Seymour, կասկած չթողնելով, որ երկու խորագրերն էլ Կոստանյանցը քաղել է մի երրորդ աղբյուրից՝ ձեռքի տակ չունենալով այդ ենթադրական աշխատություններից և ո՛չ մեկը և պարզ պատկերացում իսկ չունենալով, թե իրականում Ֆրեշֆիլդի հոդվածից պիտի տվյալներ քաղել Սեյմուրի մասին, թե՞ ընդհակառակը:

Երկար տարիներ Աբովյանի կյանքի և ստեղծագործության առեղծվածային հարցերի լուսաբանումը մեր գրական-բանասիրական հետազոտությունների կետ-նպատակը դարձրած լինելով, բնականաբար, չէինք կարող անտարբերությամբ անցնել այսօրինակ գայթակղիչ, բայց և խճճված խնդրի կողքով:

Որպեսզի թյուրիմացությունը հիմնավորապես պարզվեր և այլևս տարակարծության տեղիք չմնար, հենց սկզբից պարտք համարեցինք հիշյալ տեղեկանքների հավաստիությունը մեկ անգամ էլ ստուգել: Շատ գրապահոցներ այցելեցինք, տեղեկատու շատ աղբյուրներ քրքրեցինք, ծանոթ լինելով հանդերձ Ա. Հովհաննիսյանի՝ տակավին 1933 թ. կատարած որոնումների տխուր վախճանին: Հարգարժան գիտնականն այն ժամանակ անկեղծորեն խոստովանել էր. «Մոսկվայում և Լենինգրադում մեզ չհաջողվեց գտնել H. D. Seymour: „His few lines about his ascent of Ararat. London, 1877“ աշխատությունը, որտեղ հնարավոր է, որ նոր տեղեկություններ լինեն Աբովյանի մասին»³:

Չենք թաքցնում, սկզբում մեզ նույնպես չհաջողվեց նման խորագրով գիրք կամ հոդված գտնել ո՛չ թե միայն Մոսկվայում ու Լենինգրադում, այլև Երևանում, Թբիլիսիում, Կիևում, Կաղանում, Տարտուում, նաև արտասահմանյան գրադարաններում, որոնց հարցում էինք ուղղել մասնավոր կարգով:

Եվ դա թող ո՛չ ոքի չղարմացնի, քանի որ, ինչպես հետագայում պարզվեց, այդպիսի ուղեգրական երկ առհասարակ գոյություն չի ունեցել, Սեյմուրը, եթե մինչև իսկ որոշ գրառումներ արած էլ եղել է, ապա դրանք երբեք չի՛ հրատարակել, վերջապես՝ նրան վերագրվող գրքի ենթադրական խորագիրը Ե. Շահադիդն ու Ա. Հովհաննիսյանը անկախաբար փոխ են առել Կարապետ Կոստանյանցից՝ առանց նրա հղումների վրա ուշադրություն դարձնելու:

3 Ա. Հովհաննիսյան, Աբովյան, Երևան, 1933, էջ 71.

Այս որոնումների ընթացքում մի վարմանալի բան, այնուամենայնիվ, պատահեց մեզ, երբ կարդացինք վերջին տարիներս լույս տեսած մի գրականագետի աշխատություն, որը ո՛չ միայն իրականության տեղ է ընդունել Ս. Հովհաննիսյանի ենթադրությունը, այլև իրեն ներկայացրել է գոյություն չունեցող այդ «գիրքը» կարդացած, այն էլ հայերեն թարգմանությամբ, իսկ «գիրքն» էլ հռչակել որպես նոր փուլ արովյանագիտության մեջ: Այդ գրականագետը սևով սպիտակի վրա գրել է. «Նոր էտապ է սկսվում արովյանագիտության մեջ՝ 70—80-ական թվականների էտապը: Ստեղծված հետաքրքրությունը բավարարելու համար Արովյանին որոնեցին նաև և՛լրոպացի ճանապարհորդների աշխատություններում ու հուշերում: Թարգմանեցին, Հաքստհաուզենից բացի, Բոդենշտեդին (Հ. Բարխուդարյան, 1889) և Սեյմուրին (1877)»⁴:

Քանի որ Սեյմուրին վերագրվող գրքի հիմնական առանցքը կարող էր լինել միայն ու միայն Արարատի գագաթ բարձրանալը, մենք ուշի-ուշով վերլնթերցեցինք տվյալ նյութին վերաբերող հին ու նոր մի քանի աշխատություններ և, ի վերջո, անգլիացի նշանավոր գիտնական և ճանապարհորդ Հ. Ֆ. Բ. Լինչի «Հայաստան» երկհատոր ուղեգրության մեջ (Լոնդոն, 1901) գրտանք այս 60-ամյա թյուրիմացության պատասխանը:

Լինչի հոյակապ գործի մատենագիտության բաժնում, ուր հիշատակված են Արարատին վերաբերող կարևորագույն հոգվածներն ու գրքերը՝ լույս տեսած հին ժամանակներից մինչև XIX դարի վերջերը, կա մի այսպիսի տեղեկանք. „*Seymour (F. D.) His few lines about his ascent of Ararat in 1845 are to be found in Freshfield's Early Ascents of Ararat. Alpine Journal, VIII, p. 215, London, 1877*“: Թարգմանելով հիշյալ բառերը հայերեն, ստանում ենք. «Սեյմուր (Հ. Դ.). նրա մի քանի տողը 1845-ի իր վերելքի մասին դեպի Արարատ մեջ է բերված Ֆրեշֆիլդի «Հին վերելքներ Արարատի գագաթը» հոգվածում, „*Alpine Journal*“, VIII, էջ 215, Լոնդոն, 1877»⁵:

Կարծես հին մշուշը ցրվում է, և հրապարակ է գալիս մերկ ճշմարտությունը: Սեյմուրը ո՛չ թե գիրք է գրել, այլ մի քանի տող միայն հաղորդել իր վերելքի մասին, որոնք և մեջ են բերված, ինչպես Լինչն է ասում, Ֆրեշֆիլդի հոգվածի 215-րդ էջում:

Բայց ի՞նչ է ասել Սեյմուրը իր վերելքի և Արովյանի մասին այդ մի քանի տողի մեջ, կամ էլ, առհասարակ, Արովյանը նրա ուղադրության կենտրոնում

⁴ Ս. Բագյան, Արովյանի գրական ժառանգությունը, Երևան, 1966, էջ 29: Ցավալի է նաև, որ Հ. Բարխուդարյանի թարգմանությունը ևս արովյանագիտական նվաճում է դիտված, մինչդեռ թարգմանիչը նման դիտավորություն բուրրովին չի ունեցել. նա հայացրել է Բոդենշտեդի «Հաղար ու մեկ օր Արևելքում» գրքի՝ Հայաստանին նվիրված գլուխներից միայն մեկը, ուր Արովյանի մասին երեք փոքրիկ պարբերություն միայն կա, մինչդեռ նույն Բոդենշտեդի գրքի՝ Արովյանի մասին գրած ամբողջական գլուխը ղանց է առնված: Հիշեցնենք հեղինակին, որ Բոդենշտեդի՝ Արովյանին նվիրված իսկապես ուղագրավ էջերը հայերեն են թարգմանվել ու հրատարակվել նախորդից ուղիղ քսան տարի առաջ (1869 թ.), Պոլսի «Մասիս» լրագրում (№ 931 և 932, դեկտեմբերի 13 և 30): Թարգմանիչն է ոմն Արմավրեցի: Եթե խոսքը «նոր էտապի» մասին է, ապա 1869 թ. պիտի լիներ դա:

⁵ Lynch H. F. B., Armenia, vol. II, London, 1901, էջ 181:

Նույնը տե՛ս նաև Լինչի աշխատության ռուսերեն թարգմանության մեջ (Տփղիս, 1910, հատ. II, էջ 632): Դժվար չէ նկատել, որ Կոստանյանցն իր մատենագրական ցանկում այս տողերն է աննշան կրճատումով արտագրել (կամ արտագրել ու վել), չնկատելով, որ հետնորդների համար թյուրիմացության դուռ է բաց անում:

Չ Հանդես, № 1

եղև⁶ է, թե՞ ոչ: Պարզ է, որ առաջադրված հարցերին վերջնականապես պատասխանելու համար պետք էր ձեռքի տակ ունենալ նաև «Ալպիական ամսագրի» 1877 թ. № 8-ը:

Հարկ եղավ հարցում ուղղել Հոնդոնի Բրիտանական թանգարանին: Պատասխանը շատ շուշացավ. ստացվեց համապատասխան էջերի լուսապատճենը, որոնց մեջ և Սեյմուրի այնքա՛ն արյուն պղտորած տողերը, ընդ որում դրանք հանդիպում են ո՛չ թե անմիջապես հոգվածում, որը վերաբերում է Ֆրեդֆիլդի՝ 1868 թ. մայիսի 27-ի վերելքին Արարատի գագաթ, այլ այդ հոգվածին «Ալպիական ամսագրի» խմբագրի կցած ծանոթագրության մեջ (խորագրված՝ «Հնօրյա վերելքներ դեպի Արարատ» = «Early Ascents of Ararat»): Բերում ենք Սեյմուրի խոսքերը նախ՝ բնագրով, ապա՝ հայերեն.

Mr. Seymour says: „I cannot lay my hands on my notes now. My companions were two Armenians and a Cossack officer. I remember that we slept in a woody dell before commencing the ascent in charge of the Cossack guard. We could obtain no porters, and one of the Armenians served as guide. We had to carry all we wanted for our ascent ourselves. I remember I had chickens, &c., fastened round my waist. At the last moment the Armenian who served as guide refused to come because he had no boots. I had to give him my own boots and wear some Persian slippers. The time we could stay on the summit was very short, as the clouds began to gather round us. We reached the plateau on the top and descended, I remember, by a different hollow of the mountain to that by which we had ascended, coming down a tremendous snowslide. Our Cossacks lifted a good many cattle on the following day“.

«Իմ գրառած նոթերը, — ասաց պարոն Սեյմուրը, — հիմա ձեռքիս տակ չեն: Գործակիցներս էին Երկու հայ և մեկ կողակ սպա: Հիշում եմ, որ մինչև վերելքն սկսելը մենք քնեցինք անտառային բացատում, կողակների պաշտպանության տակ: Մենք չկարողացանք բեռնակիրներ գտնել, իսկ մեր առաջնորդը մի հայ էր: Այն բոլորն, ինչ վերելքի համար պետք էր մեզ, ստիպված էինք ինքներս տանելու: Հիշում եմ, որ ունեի ձտեր և ուրիշ բաներ՝ կապած իմ գոտուն: Վերջին պահին այն հայը, որը մեր առաջնորդն էր, հրաժարվեց գալ, որովհետև կոշիկներ չունեի: Ես ստիպված էի նրան տալ սեփական կոշիկներս և ինքս հագնել պարսկական մույկեր: Այն ժամանակամիջոցը, որ մենք կարող էինք մնալ լեռան կատարին, շատ կարճ էր, որովհետև մեր շուրջն սկսեցին ամպեր կուտակվել: Մենք հասանք գագաթի հարթությանը և վերադարձանք, ինչքան հիշում եմ, ոչ այն շավղով, որով բարձրացել էինք՝ ճանապարհին սահելով ձյունապատ ահավոր լանջերով: Մեր կողակները հաջորդ օրը հավաքեցին շատ անասուններ»⁶:

Սեյմուրի վկայության մեջ, ինչպես տեսնում ենք, Աբովյանի անունն անգամ չկա, ուր թե այն նոր էջ դառնար աբովյանադիտության մեջ: Գուցե թե առաջնորդ ասելով Սեյմուրը նկատի է ունեցել հենց Աբովյանին, շատ հնարավոր է, բայց հայտնի է վերջինի նույն խնդրին նվիրված «Նոր վերելք դեպի Արարատ» հոգվածից (ռուսերեն), որ ինքը սոսկ ուղեկցել է անգլիացի միլիտանտ իրոշը դեպի Արարատ, մինչդեռ իրենց իրական առաջնորդը դեպի լեռան

⁶ „Alpine Journal“, VIII, London, 1877, էջ 215.

գագաթ եղել է նոր Ակոռիի գեղջուկ Սիմեոն Սարգսյանը, որը մի տարի դրանից առաջ Ճանապարհ էր ցույց տվել նաև Հ. Աբխիսին։ Կարձ՝ Սեյմուրի խոսքերը, որ ամբողջությամբ մեջ բերինք, ավելի իր անձին են վերաբերում, քան մեկ այլ ուրիշի և աբովյանագիտությունը ոչնչով չեն օգնի։

Բավականաչափ ընդարձակ այս նախաբանից հետո արդեն կարելի է անցնել բուն խնդրին և պարզել՝ ո՞վ էր Սեյմուրը, ե՞րբ է նա հանդիպել իմ. Աբովյանին և ի՞նչ պատահարներով է ուղեկցվել նրանց համատեղ վերելքը դեպի լյառն Մասիս։

Հետագա շարադրանքի համար աղբյուր են ծառայելու Աբովյանի չափազանց կարևոր ուղեգրությունը («Նոր վերելք դեպի Արարատ»), մի պաշտոնական, անուղղակի վավերագիր՝ պահպանված Վրացական ՍՍՀ պետական պատմական արխիվում, մի հնօրյա նամակ Սեյմուրի էջմիածին ժամանելու վերաբերյալ, կաթողիկոսական հուշաթերթիկի պատճենը և մի քանի պատառիկ Ծ. Բողենշտեդի երկհատոր հիշողություններից (Բեռլին, 1888)։

2

Հենրի Դեմբի Սեյմուրը անգլիական մի հին, աղնվականական գերդաստանի զավակ էր՝ հայարտ իր ծագմամբ և չափազանց հարուստ։ Հազիվ համալսարանն ավարտած՝ նա իրեն նվիրել էր ճանապարհորդությունների հեռավոր, անծանոթ աշխարհներ տեսնելու և ուսումնասիրելու համար։

1840-ական թթ. սկզբներին նրան տեսնում ենք Արևելքում։ Տեղացիների ներքին կյանքի մեջ առավել խորանալու դիտավորությամբ նա վարձել էր հատուկ ծառաներ՝ մի թուրք, մի պարսիկ ու մի վրացի։

Քանի երիտասարդ էր Սեյմուրը, բարձրից էր նայում մարդկանց վրա, բոլորովին արժեք չտալով դիրք ու պաշտոնի, իսկ երբ ավելի լրջացավ, սկսեց իրեն շրջապատել ազատամիտ (լիբերալ) կուսակցության գործիչներով, նրանց հետ սեղան նստել։

Մեծ հաջողություններ ունենալով Սեյմուրը բարձրաշխարհիկ կանանց շրջանում, սրամտում էր և փրկիսոփայում՝ առաջին հանդիպածի վրա շշմեցուցիչ ազդեցություն թողնելով։ Սիրում էր համաշխարհային խնդիրներ «լուծել», պախարակել ազգերի ու ժողովուրդների կյանքի սովորոտ կողմերը, առանց հանդամանորեն քննելու, թե հասարակական-քաղաքական-տնտեսական ի՞նչ իրադրությունների հետևանք էին դրանք։

Լինելով Կովկասի փոխարքա Միխայիլ Սեմյոնովիչ Վորոնցովի քրոջ ազգականներից և վայելելով «նորին պայծառափայլության» բարձր հովանավորությունը վերջինիս իշխանության սահմաններում, մասնավորապես Անդրկովկասում, նա իրեն ազատ ու անկաշկանդ էր զգում։

Անզուսպ ու կամակոր մարդ էր Սեյմուրը, ինչ միտքն ընկներ, անհապաղ կաշխատեր իրականացնել, չմտածելով, որ դա կարող է ուրիշներին ինչ-ինչ տհաճություններ պատճառել։

Ահա թե ինչու լորդ Սեյմուրը որոշել էր, որ աշուն ժամանակ, առանց նախապատրաստության և պատշաճ հանդերձանքի, կարելի էր բարոյական ճշմարտամբ հարկադրել մարդկանց, որ առաջնորդեն իրեն դեպի Արարատ, այն էլ ո՛չ թե երկրաբանական-աշխարհագրական ուսումնասիրությունների, այլ «սրբաբաղան լեռան» գագաթից իշխան Վորոնցովին և իր անգլիացի ընկեր-բարեկամներին նամակներ գրելու համար։

Սեյմուրին մոտիկից գիտեր գերման բանաստեղծ Փ. Բոդենշտեդը: Հայտնի է, որ 1859-ին, լինելով լոնդոնում, վերջինս հյուրընկալվել էր նրա տանը, բայց թե ե՞րբ և ո՞րտեղ էին ծանոթացել, վերջնականապես չենք ճշտել: Կա ենթադրություն, ավելի շուտ՝ չհիմնավորված պնդում, իբր Բոդենշտեդն է խնդրած եղել Աբովյանին, որ երբ Սեյմուրը ժամանի Երևան և ներկայանա իրեն, ապա օգնի և աջակցի նրան, իսկ Սեյմուրին էլ խորհուրդ տվել՝ Երևան հասնելուն պես որոնել-գտնել Աբովյանին: Եթե հաստատ է այս ամենը, ապա Բոդենշտեդն անսպասելի մի քանի տող պիտի գրած լիներ Աբովյանին՝ նախապես ուղարկած կամ Սեյմուրին հանձնած: Սակայն այդօրինակ նամակ մեջտեղում չկա, թո՛ղ որ Աբովյանի և Բոդենշտեդի նամակագրությունն ամբողջությամբ չի՛ հայտաբերված տակավին: Այդ ենթադրվող նամակը, որի գոյությունը շատ կասկածելի է, պետք է առնվազն մեկուկես տարվա հնություն ունենար, քանի որ Բոդենշտեդն, իր «Հաղար ու մեկ օր Արևելքում» հուշագրի համաձայն, Անդրկովկասից հեռացավ 1845 թ. գարնանը⁷, իսկ Սեյմուրի՝ Պարսկաստանից Հին-Ջուղայի վրայով Ռուսիայի տիրապետության սահմանները մոտք գործելը սպասվում էր 1846-ի գարնանը միայն: «Առանց որևէ պատրվակի բաց թողնել Ջուղայի կարանտինով Պարսկաստանից եկող անգլահայատակ Սեյմուրին»,— փոխարքա Վորոնցովի անունից, 1846 թ. մարտի 26-ին հրամանագրվել էր Ջուղայի մաքսատան պետին⁸:

Երկար սպասեցին մաքսատան աշխատողները և միայն սեպտեմբեր ամսին դիմավորեցին Սեյմուրին և ճանապարհ գրին դնլի Երևան:

Սեպտեմբերի մոտավորապես 13-ին նա արդեն Երևանում էր:

3

Աբովյանը Սեյմուրին չէր սպասում: Առանց այն էլ 1846-ին և երևանյան նախորդ երկուս և կես տարիներին օտար ճանապարհորդների երեսից այնքան դառնություններ էր տեսել, որ հիմա, հանուն հոգեկան հանգստի, ղ չուշանում էր նրանցից:

Հաղիվ Երևան ժամանած՝ 1843 թ. օգոստոսի վերջերին, դպրոցական բարձր իշխանության հանձնարարությամբ նա ուղեկցում է Ավգուստ ֆոն Հաքստհաուզենին Երևանյան զավառի այլևայլ կողմերում: Մի քանի օր հետո Աբովյանի օգնությանն է դիմում մեկ ուրիշ օտար ճանապարհորդ՝ Պավել Լիվենը: Նրանց նպատակակետերից մեկը էջմիածինն էր, ուր սակայն շատ վատ են ընդունում և՛ մեկին, և՛ մյուսին, իսկ հետո, խուսափելու համար գլխացավանքներից, Սինոդի իշխանավորները տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսի անունից զրպարտանքներով լի մի ամբաստանագիր են ներկայացնում Անդրկովկասյան երկրամասի գլխավոր կառավարչին, մեղադրելով Աբովյանին, որ նա, ապրելով Արևելքի և Արևմուտքի խաչուղիներում, առանց նախապես իմաց անելու, օտար

⁷ Տե՛ս F. Bodensiedt, Tausend und ein Tag im Orient, III, Berlin, 1865, էջ 31, 94 և 211: Ըստ այսմ՝ Թիֆլիսից Բոդենշտեդը դուրս է եկել 1845-ի զգարնան սկզբին», «ապրիլի 19-ի առավոտյան ժամը 8-ին», թողել Ռեդուտ Կալեն (Սուխումին), իսկ մայիսի վերջին կանգ առել Կերչի նավահանգստում, այնուհետև՝ Լրիմից անցել է Օդեսա, իսկ այստեղից էլ՝ Կոստանդնուպոլսում:

⁸ ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 4, ց. 3, դ. 144, թ. 1:

ճանապարհորդներին քաշ է տալիս էջմիածին, հաղորդակից դարձնում վանքի ներքին կյանքին, խոովում միաբանների անդորրը. բողոքում էին, որ նրա հանդգնությունների պատճառով նույն տառանքն անգամ հանգիստ չունի, աղաչում, խնդրում, որ այդ «հանդույն մարդուն» հեռացնեն Երևանից: Ճիշտ է, այս ամբաստանությունն անհետևանք անցավ, քանի որ Աբովյանն օտարներին ուղեկցում էր բարձր իշխանության հանձնարարությամբ ու խնդրաբով, սակայն նրա սիրտը խոր խոցվեց հայրենակիցների նման տմարդի արարքից⁹: Օտարներին ման ածելով Հայաստանում՝ Աբովյանն ամենայն անգամ հետապնդում էր ազդի և հայրենիքի շահերը, ջանում եվրոպացիների շրջանում նպաստավոր կարծիք ստեղծել հայոց մասին, մինչդեռ նույն ազգի հոգևոր պետերը ո՛չ միայն երախտամոռություն էին հանդես բերում, այլև թունավորում էին նրան շրջապատող մթնոլորտը:

Պակաս դառնություններ չբերեց Աբովյանին 1844 թ. ևս, երբ նորից, իշխանավորների հրամանով, ապրիլից մինչև սեպտեմբեր, առաջնորդեց և ուղեկցեց երկրաբան Հերման Աբիխին Հին Հայաստանի արևելյան և արևմտյան աշխարհներում, մեծապես օգուտ բերելով նրա «գաղտնախորհուրդ այդ դիտարշավին» (իր արտահայտությունն է):

1840-ական թթ. սկզբներից Ռուսիայի նախաձեռնությամբ և Անգլիայի ու Ֆրանսիայի դորժակցությամբ նախապատրաստվում էր Թուրքիայի ապագա բաժանումը՝ տվյալ տերությունների միջև: 1844 թ. վերջնական, գաղտնի բանակցությունների համար նիկոլայ Առաջինը մեկնեց Անգլիա: Եվ հիմա, Աբիխին գործուղելով Անդրկովկաս և Հայաստան, Ռուսաստանը կամենում էր պարզել, թե ինչ ռազմական և տնտեսական նշանակություն կարող են ունենալ Հին Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները, որոնք անցնելու էին իր տիրապետության տակ:

Աբովյանը մեծ ջանքեր թափեց հանուն Աբիխի առաքելության արդյունավետ վախճանի, բայց այս անգամ էլ նրա «միակ վարձատրությունն եղավ ...երախտամոռությունը և հավիտյան ամոթը»¹⁰:

Եվ ինչի՞ համար: Համատեղ շրջագայությունների վերջին փուլում, 1844 թ. օգոստոս-սեպտեմբերին, Աբիխը և Աբովյանը երեք անգամ փորձ արին բարձրանալ Արարատի գագաթը, և ամեն անգամ էլ շատ փոքր և հեշտ հաղթահարելի տարածություն էր մնում մինչև նպատակակետ, սակայն անսպասելիորեն հայտնված կատաղի փոթորիկը, ձյունախառն կարկուտն ու ամեհի կայծակը հարկադրում էին նրանց ետ դառնալ, եթե չէին ուղում կյանքով հատուցել նման հանդգնության համար:

Այս ամենից հետո, փոխանակ բախտից գանգատվելու և բնության տարերքին հայհոյելու, Աբիխն անհաջողության մեղքը բարդում էր Աբովյանի վրա, որը հանգամանորեն պատմել և ցույց էր տվել, թե Պարրոտը և ինքը 1829-ին ինչ ճանապարհով և ինչպես էին հասել Արարատի բարձրագույն կատարը: Չկարողանալով սառնասրտորեն անհաջողության պատճառները վեր-

⁹ «Գիտական նյութերի ժողովածու», № 1, Երևան, 1941, էջ 189—193: Խ. Աբովյան, Երկրի իրակատար ժողովածու, հատ. VII, էջ 138 [181—182]: «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1962, № 3, էջ 101: ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 1, ց. 1, դ. 64, թթ. 6—8:

¹⁰ «Դիվան Խաչատուր Աբովյանի», հատ. I, Երևան, 1940, էջ 218:

լուծել և պատշաճ եղրահանգումներ կատարել, Աբիխն շտապեց հայտարարել. «Եթե ավելի քիչ լսեի Աբովյանին և հետևեի իմ սեփական կարծիքին, ապա... գազաթ հասնելն ինձ համար զբոսանք կլիներ...»¹¹:

Այսօրինակ տրամադրությունն այնքան խորը խոցեց Աբովյանի վեհ հոգին, որ ամիսներ շարունակ նա չէր կարողանում ինքն իրեն գտնել և որևէ լուրջ բանով պարապել. «...Աբիխն ինձ ծուլացրել է...», — խոստովանում է նա 1845 թ. գարնանը, Բողենշտեդին հասցեագրված մի երկտողում¹²:

4

Հանդիպումը Սեյմուրի հետ (ի դեպ, նրան ուղեկցում էր աստիճանավոր ուսն Ի.-ն, երևի Վորոնցովի կարգադրությամբ) Աբովյանի համար անակրն-կալ էր. այդպես էլ ինքը գրում է՝ «պատահմամբ ծանոթանալով նրա հետ...»¹³, որովհետև առաջներում նրան չէ՛ր տեսել, նրա մասին չէ՛ր լսել և հիմա էլ չէ՛ր սպասում, մինչդեռ Սեյմուրը, ինչպես երևում է, որոշել էր նախապես, թե երևան հասնելուց հետո ո՞ւմ և ինչի՞նչ համար էր դիմելու:

Ֆ. Պարրոտի «Reise zum Ararat» գիրքը, ըստ էության, քաղաքակիրթ մարդկության համար վերստին հայտնագործեց Արարատ—Մասիսը և, միա-ժամանակ, անփոխարինելի ուղեցույց դարձավ Արևելքով և մասնավորապես Հայաստանով հետաքրքրվող ճանապարհորդների ու բնախույզ-գիտնականնե-րի համար, որոնց մեծ մասը, որպես կանոն, նախապես կարդում էր հիշյալ ուղեգրության բնագիրը, իսկ ավելի ուշ՝ նաև անգլերեն թարգմանությունը (լույս տեսած 1845-ին, Լոնդոնում) և ապա ընկնելով Հայաստան, առիթը բաց չէր թողնում լինելու Մասսի փեշերին կամ մագլցել նրա լանջերն ի վեր, այն էլ Աբովյանի հետ: Եթե դիպվածով Աբովյանին չէին հանդիպում, ապա որոնում, գտնում էին:

Երևան ժամանելով մոտավորապես 1846 թ. սեպտեմբերի 13-ին և որո-նելով ու գտնելով Աբովյանին, Սեյմուրը խորամանկորեն ծածկեց Հայաստան գալու իր բուն դիտավորությունը: Նա Աբովյանից միայն խնդրեց, որ առաջ-նորդի իրեն մինչև այն վայրը, ուր մի ժամանակ հարուստ ու փարթամ Ակոռի գյուղն էր փոխած, ինչպես նաև ցույց տալ 1840 թ. երկրաշարժի ավերածու-թյունների հետքերը (և՛նա հրավիրեց ինձ ևս ուղեկցելու իրեն գոնե մինչև այն-տեղ...»):

Սեյմուրը մտադիր էր նաև մի օրով կանգ առնելու էջմիածնում և հանդի-պելու կաթողիկոս Ներսես Աշտարակեցու հետ, որը վաղուց չէ, որ ժամանել էր Մայր աթոռ (մայիսի 13-ին) և օծվել ու բազմել հայրապետական գահին (հունիսի 9-ին):

Երեք օրը լիովի կբավականացներ այսօրինակ՝ ծրագրի իրականացման համար, մանավանդ որ Սուրբ Խաչի տոների պատճառով Աբովյանն էլ աղատ

¹¹ H. A b i c h, Aus kaukasischen Ländern, I, Wien, 1896, էջ 157:

¹² Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. VII, էջ 350 [356]:

¹³ Այս և հետագա բոլոր քաղվածքները, եթե հատուկ աղբյուր չի նշված, արված են Աբով-յանի «Новое восхождение на Арарат» հոդվածից: Նրա բնագիրը չի՛ պահպանվել, տպագրվել է՝ «Кавказ», 1847, մայիսի 17, № 20, արտատպությունն ու թարգմանությունը՝ Աբովյանի եր-կերի ակադեմիական հրատարակության VII հատորում:

էր դպրոցական սլարապմունքներից: Եւ «ես հաճույքով ընդունեցի ազնիվ անգլիացու առաջարկութիւնը», — ասում է Աբովյանը:

Սեպտեմբերի 14-ին նրանք արդեն էջմիածնում էին և նույն օրն էլ արժանացան Ներսես Աշտարակեցու սիրալիր ընդունելութեանը:

Կաթողիկոսն օրեր հետո գրած իր նամակներից մեկում մեջ է բերել անգլիացու խոսակցութիւնից մի սլատառիկ. «Զգալի է ինձ յոյժ, — ասել է Սեյմուրը, — զի ի Բաղդատայ մինչ այսր ոչ ուրեք տեսի զոք խորհրդածող վասն օգտի հասարակութեան, այլ ամենայն ոք խորհի վասն անձին միայն, որով ապաքախտ գտանի ամենայն Թուրքաստան, Պարսկաստան և Հայաստան»¹⁴, Այս խոսքերը պետք է որ Ներսեսի համար Աբովյանը թարգմանած լիներ, թեպետ կաթողիկոսն իր նամակում Աբովյանի անունը չի հիշել:

Ներսեսի անտիպ հիշատակարանում (ավելի ճիշտ՝ գրած և ուղարկած նամակների մատյանում) սլահականվել է Սեյմուրի հետ ունեցած հանդիպման մասին մեկ այլ գրառում ևս, որից պարզվում է, որ անգլիացի ճանապարհորդին ավելի իր փառամոլութեանը հագուրդ տվող արեւելյան (հայկական) հիշատակները՝ կաթողիկոսական ինքնագիրն է հետաքրքրել և նախանձելի ծանոթութիւնները, քան երկիրն ու ժողովուրդը:

Ներսեսը գրում է.

«Ի 14 սեպտեմբերի այսր ամի լօրդ Հէնրի Դամբ Սիմօր եկն յԱթոռն, որում և մեք տուաք զայս մեր ձեռագիր ըստ նորույն խնդրանաց, ի վերայ սովորական կարմրադեղ թղթոց կնքեցելոց.

Ներսէս ծառայ Քրիստոսի... և այլն:

Թողութեամբ¹⁵ հոգւոյ յարգելով զգալուստ ձեր մեծանձնութեան ըստ հաճոյս ձեր վասն ունելոյ զանուն իմ ի միտս ձեր, գրեմ իմով սեպհական մատամբ զսոյն տէր Հէնրի Դամբ Սիմօր լօրդ վասն մնալոյ առ ձեզ, և հաւատարմացուցանեմ, թէ ունիմ սլահել անմոռաց զյիշատակ անուան ձեր՝ ըստ ջերմեռանդութեանց ձերում բարեպաշտ քրիստոնէութեանց, զոր վայելեցաք ի սուղ միջոցի ի 14 այսր սեպտեմբերի յայսմ 1846 ամի ի վանս սրբոյ էջմիածնի որ յԱրարատ:

Պատրիարկ և կաթողիկոս ամենայն Հայոց Ներսես»¹⁶,

Սեպտեմբերի 15-ի առավոտյան, հրաժեշտ տալով կաթողիկոսին, իսկ ապա ձիեր վարձելով՝ Աբովյանն ու Սեյմուրը (նաև աստիճանավոր պարոն Ի.-ն) թողնում են էջմիածինը և Արաքսի արդեն մերկացած հովտով դիմում դեպի Արարատ:

Իրենց բուն դիտավորութիւնն Աբովյանից դարձյալ թաքցնելով՝ Սեյմուրն ու իր մյուս ուղեկիցները մեկ-մեկ խոսք էին գցում, թե «ինչքան երջանիկ կլինեին», եթե կարողանային բարձրանալ լեռան գագաթը: «Այդպիսի ցանկութիւնն ինձ ավելի քան տարօրինակ էր թվում», — ասում է Աբովյանը, մտքով չանցկացնելով, որ հենց դրան էլ նրանք ձգտում էին:

¹⁴ Մաշտոցի անվ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, № 259/80, էջ 2: Նամակն ուղղված է Զ. Զ. Շահադիյանին և գրված է ն. թ. սեպտեմբերի 28-ին:

¹⁵ Այս բառը ենթադրաբար ենք վերծանել, հնարավոր է և՛ «Ուրախութեամբ»:

¹⁶ Մաշտոցի անվ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, № 93/202, թ. 92ա:

Խումբը նույն օրն էլ հասնում է Արալըիս կողակական պահակակետը՝ կտրելով 50 վերստ տարածություն: Միայն այժմ Սեյմուրը հայտնում է իր վճռական մտադրությունը՝ բարձրանալու Արարատի զագաթը: Այդ անսպասելի լուրը Արովյանին մտատանջության մեջ է դցում: Եւ փորձում է ռմի քանի անգամ, համոզել անդլիացուն՝ ետ կենալու այդ ձեռնարկությունից, բայց իզուր...»:

Մինչ կանգ են առնում նոր Ակոռի գլուղում առաջնորդներ վերցնելու համար, օգտվելով պատեհությունից՝ Արովյանը փորձում է վերադառնալ Երեւան, սակայն անսպասելիորեն հայտնվում է ղինափակի հրամանատար եսավու Կ-ն և համոզում մեալ, խոստանալով անձամբ ուղեկցել նրանց և հոգալ բոլոր պետքերը:

Եւ՛ վա՛հ՝ կողակական պահակակետից առնելով հարկավոր պարեն ու պաշար և առաջնորդ վերցնելով նորակոռեցի զեղջուկ Սիմեոն Սարգսյանին (Արիիսի նախորդ տարվա ուղեկցին), եսավուի, երեք հայերի և չորս կողակի ուղեկցությամբ Արովյանն ու Սեյմուրը ճանապարհ են ընկնում դեպի Հին Ակոռի (ավերակները): Արդեն երեկոյան հասնում են լեռան փլվածքից հրաշքով փրկված փոքրիկ այգին և զիշերում այդտեղ:

«Վշտալի է,— ասում է Արովյանը,— երբ մարդ նայում է երբեմնի ծաղկյալ բնակավայրից մնացած այդ տխուր հետքերին, նամանավանդ ինձ՝ նրա նախկին բարեկեցությունը հիշողիս և այդ վայրերը... հաճախակի այցելողիս համար... Մի քանի ծառ այստեղ-այնտեղ՝ բոլորովին չորացած ու մի քանի տեղ էլ դեռ տխրադեմ կանաչ մնացած, մի քանի տապանաքար Սուրբ Հակոբի հովտից աջ, խոտերի մեջ խրված՝ նախկին գերեղմանոցի մնացորդները, ու մի քանի փոս էլ՝ ղոհված մարդկանց տների վրա բան գտնելու հույսով գիշատիչ քրդերի ձեռքով փորված,— թախծալիորեն հիշեցնում էին անցյալ կյանքի հետքերի մասին»:

Այս վերջին տողերը խիստ հատկանշական են Արովյանի նույն օրերի հոգեվիճակը հասկանալու համար:

Այլևս անկարող լինելով ամենուր տիրող քարացած կարգ ու կանոնը փոխել կամ էլ հայտնության լուսավորության ճանապարհին շարունակաբար ծառացող արգելքները հաղթահարել, վերջապես, որ ամենաէականն է, խրախուսանք ու օժանդակություն չգտնելով սիրելի ազգակիցների շրջանում և այդ պատճառով կորցնելով զալիք լավագույն օրերի հույսը, որքան էլ Արովյանն իր վրա ուժ էր գործադրում հայրենի բնաշխարհի անդուգական գեղեցկություններով (անգամ տարվա այդպիսի ուշ ժամանակին) ու Արարատ լեռան վեհափառությամբ հրապուրվելու, այնուամենայնիվ առավել հուղիչն ու ցնցողը թախծալի պատկերներն էին դառնում, անցած ճանապարհին հանդիպած մերկացած դաշտերն ու չորացած բուսականությունը, երբեմնի հարուստ ու փարթամ գլուղից մնացած միակ վկաները՝ շիրմաքարերն ու դատարկ փոսերը, որ գանձ գտնելու հույսով փորել էին գիշատիչ թափառաշրջիկները:

Ուրիշ բան դժվար էլ էր Արովյանից սպասել, մանավանդ որ, ուղիղ երկու շաբաթ դրանից առաջ (օգոստոսի 31-ին) նույն Արովյանը Մկրտիչ Էմինին ուղղված նամակում, կիսելով «հոգեծանոթ» գիտնականի հետ իր անբուժելի հոգեկան վիշտը, գրում էր. «Ես վերջացուցի՝ համարեա՛ թէ՛ ղնպատակ կենացս: Բիրազդի սրտամաշութիւնք փութով առագաստեալ ղամենայն իղձ և դիտաւորութիւն իմ ի նպաստաւորութիւն ուսման մերադգի մանկանց՝ ստիպեն

դիս հրաժարիլ ի պաշտօնէ և որոնել անձին զվիճակ առանձնական: Անհնարի՛ն է ընդդէմ խթանի աքացել: յանշուքն Երևան լաւ է ունիլ զէշ մի կամ ջորի պատրաստական, քան զամենայն գիտութիւնս հրեշտակային, բայց ո՛չ. ժամանակն, հանգամանքն, այլ ո՛չ Երևան, կամ այլ ոք կրեն և առաջ բերեն զայս անյաջողութիւն: Սխալ է, որ զաղդ մեր ուսումնատեաց համարի, ամենայն ուսումն և կարգադրութիւն պարտի համապատասխանիլ վիճակի և կարեաց ժողովրդեան, մեք ո՛չ աշսպէս վարիմք, վասն որոյ կամ իբրև վարձկան՝ յօգուտ մեր միայն հայելով՝ պարտիմք շարունակել զպաշտօն սոյնօրինակ, կամ թէ ի բաց կալ միանգամայն յայնմանէ առ ի ստանալ զանդորրութիւն խղճի և սրտի: Զվերջինն որոնելով այժմ՝ կամիմ առանձնանալ և ի կամս բարձրելոյն թողուլ զամենայն, որ գալոցն է...»¹⁷:

Այս հոգեվիճակի՝ Աբովյանի ներաշխարհում վաղուց սկսված ողբերգության եզրափակիչ աբարի գրավոր արձագանքներից է, մեր կարծիքով, նաև գերման բանաստեղծ Ֆ. Բոդենշտեդին ուղղված, սակայն տակավին չհայտնաբերված նամակը, որի բովանդակությունը, յուրովի ընկալմամբ, վերջինս մեջ է բերել իր «Հաղար ու մեկ օր Արևելքում» ուղեգրության առաջին հրատարակության մեջ և հետագայում փոքր-ինչ խմբագրել:

Այդ վկայությունը տալու առիթը Աբովյանի խորհրդավոր անհայտացման լուրն էր, որ Բոդենշտեդին էր հաղորդել Անդրկովկասյան զպրոցների երբեմնի վերատեսուչ Ի. Կ. Ռոսկովչենկոն, որը 1841—1842 թթ. պակաս դառնություններ չէր պատճառել հայ նահատակ հանճարին:

Բոդենշտեդն ասում է.

«Դեռ այն միջոցին (իմա՝ 1844 թ. վաղ գարնանը— Պ. Հ.), երբ ես ծանոթացա Աբովյանի հետ, նա գտնվում էր վերին աստիճանի մոայլ և անհույս տրամադրության տակ, որ էլ ավելի ծանրացավ նրա և 'հորպատի պրոֆեսոր Աբիխի.... միջև պատահած ցավալի դեպքի պատճառով.... Աբովյանն իր վերջին նամակում գրում էր ինձ, որ վճռել է ռուս պետական ծառայությունը թողնել, և որ մտադիր է քաշվել Հայաստանի ներսերը՝ իր հայրերի օրինակով հողագործության նվիրվելու և դրանով ապրելու, որովհետև իր աննշան եկամուտները չեն բավարարում քաղաքի պահանջներին, և որ, առհասարակ, իր վիճակի բարելավմանը շարունակ սպասելը իրեն էլ ավելի մեծ թշվառության գիրկը պիտի նետի...»¹⁸:

Ֆ. Բոդենշտեդն այսօրինակ կարևոր տվյալ հաղորդելով հանդերձ, ամեն ինչ նյութականին էր հանգեցնում, մինչդեռ Աբովյանի տառապանքների աղբյուրը իր հոգեկան աշխարհում էր, իր բարձր ու նվիրական իդեալների աստիճանական խորտակումն զգալու և տեսնելու մեջ:

¹⁷ Մաշտոցի անվ. Մատենադարան, լազարյանների դիվան, թղթ. 108, գործ 60, վավ. 23 (հմմտ. «Մ. էմինի երկասիրությունները», Մոսկվա, 1893, էջ 245—246, նաև՝ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. X, էջ 272—273):

¹⁸ E. Bodens ted i, Tausend und ein Tag im Orient, II, Berlin, 1850, էջ 160—161, Ա. Բակունցը «Հայաստանի ներսերը (կամ խորքը) քաշվել» կամ ինչպես ինքն է թարգմանել՝ «Հայաստանի ներքին մասը գնալ» արտահայտությունը հասկացել է «Օսմանլուի Հայաստան» (= Արևմտյան Հայաստան) տեղափոխվել (տե՛ս «Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը», Երևան, 1932, էջ 49): Նրան իրավացիորեն առարկելով, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը գրել է. թե «անհավանական չենք գտնում, որ... Աբովյանը նկատի էր ունեցել պարզապես Փանաթեոս փոխադրվելու միտքը» (տե՛ս Ա. Հովհաննիսյան, Աբովյան, էջ 61—62):

Աղգի մեջ վերածնվելու ուժ և հնարավորություններ նա չէր գտնում և այդ պատճառով տառապում էր ու տանջվում, դպրոցական-հանրային գործունեությունից հրաժարվելու վճիռ կայացնում:

Սեպտեմբերի 16-ի առավոտյան վաղ Աբովյանն ու Սեյմուրը ճանապարհ են ընկնում և շատ շուտով հասնում Փոքր Մասսի հյուսիսային փեշին փոված անտառը, որտեղից քայլ առ քայլ հետևելով պրոֆ. Աբիխի նախորդ տարվա երթուղուն, մոտ ժ. 2-ին հասնում են Աբիխի գիշերատեղին, ուր և դադար են առնում:

Բուն վերելքն սկսում են հաջորդ առավոտյան, հրաշալի եղանակին: Շալակներն առնելով հարկավոր ամեն բան՝ տաք զգեստներ, ածուխ, փայտ, հաց, գինի և զինվելով կողակալան տեգերով, սկզբից շարժվում են դեպի արևելք՝ Փոքր Մասսի ուղղությամբ ձգվող ձորով, իսկ այնուհետև՝ դեպի հյուսիս-արևմուտք՝ հասնելով Աբիխի հայտնագործած նվիրական շավղին, որ «կարծես մի բնական սանդուղք լինի» և միակ հարմար ուղին է վերելքի համար՝ «հենց բնության կողմից այդ նպատակով ստեղծված»:

Որոշ ժամանակ անց՝ հաղթահարում են նաև Աբիխի գտած շավղի դժվարանց տեղերը և ցերեկվա մոտ ժամը 5-ին կանգ առնում մի հարմարավետ գիշերատեղում, որ հավասար էր Փոքր Մասսի բարձրությանը: Կրակ են վառում, տաքանում, ուտում և քնում:

Սեպտեմբերի 18-ին, արեգակի առաջին ճառագայթների հետ, Աբովյանն ու Սեյմուրը նորից մագլցում են դեպի վեր: Շուտով երևում է Աբիխի սպասավոր Յենկի՝ 1844 թ. կանգնեցրած խաչը: Վերելքի ուղին սկսում է ավելի ու ավելի դառիթափ դառնալ: «Պետք էր դարձյալ մի քանի զորեղ քայլ ևս անել բավական թեք լանջի վրայով, որպեսզի հասնեինք լեռան կատարը», — գրում է Աբովյանը և բերկրանքով ավելացնում. «Այս անգամ բախտը կամեցավ ինձ շնորհել մարդկային ցեղի նախահոր սրբազան բնակավայրին առաջինը երկրպագելու երջանկությունը»: Գագաթին կանգնած՝ մինչ Աբովյանը մտաբերում էր անցած-դնացած օրերը, վերհիշում Պարրոտին, 17 տարի առաջ Արարատի արծաթե կատարին կանգնեցրած իր խաչը, հուզվում և թախծում, Սեյմուրը նամականեր էր գրում փոխարքային և իր անգլիացի բարեկամներին...

Կեսօրն արդեն անցել էր, երբ բռնում են վերադարձի ճանապարհը՝ սրածայր ձեռնափայտերի օգնությամբ սղջալով փխրուն ձյան վրայով: Գիշերատեղի են հասնում իրարից անջատ՝ արդեն մթան մեջ և քնում ցածում թողած իրենց մարդկանց մոտ: Բնությունն էլ կարծես Աբովյանի հոգու նման կարճատև մեղմությունից հետո նորից խառնվում է, և ահավոր ու շարագուշակ ամպերը կախվում են նրանց գլխին:

«Արարատը նույն այդ գիշերը հագավ յուր անդրջրհեղեղյան քղամիդը, որն ավելի ու ավելի անթափանցիկ էր դառնում, իսկ երեկոյան դեմ առգամ ներքևում արծազանր տվող կայծակն ու ամպրոպի ձայնությունները ակներևորեն ցույց էին տալիս մեզ, թե ինչպիսի կատաղի մրրիկ էր սլար դալիս նոր միայն թողած լեռան դադաթին»:

Սեպտեմբերի 19-ին նրանք բռնում են վերադարձի ճանապարհը դեպի էջմիածին, ուր և հասնում են այդ կամ հաջորդ օրը:

Էջմիածնում «պատվարժան միլիոնատերը» հրաժարվում է հայ գյուղացիներին վճարել վարձած ձիերի համար նախապես պայմանավորված դումարը, և գյուղացիներն էլ՝ անկարող լինելով պատժել Սեյմուրին, գողանում են

Աբովյանի նոր, թանկարժեք վերարկուն: «Ահա՛ և իմ ո՛չ այնքան նվազ-կարևոր աշխատանքների ամբողջ վարձատրությունը (награда)», — մի տարի հետո դառն հեգնանքով վերհիշում էր Աբովյանը¹⁹:

Սեյմուրից Աբովյանը բաժանվեց սեպտեմբերի շուրջ քսանին, իսկ դրանից մի քանի շաբաթ հետո պատեհությունը նրան հանդիպեցրեց ռուս գրող և ճանապարհորդ Ա. Ն. Մուրավյովին (1846, հոկտեմբեր), ասյա մեջտեղ եկան դարձողական անհետաձգելի գործեր, այնպես որ նա Արարատի գագաթը կատարած իր վերջին վերելքի նկարագրությունը կարողացավ, իբրև բաց նամակ, գրել և ուղղել Տփղիսի «Кавказ» լրագրի խմբագրությանը 1847-ի առաջին ամիսներին միայն:

Այս պարբերաթերթում էլ, որոշ կրճատումներով, այն լույս տեսավ նույն 1847 թ. մայիսի 17-ին (№ 20), «նոր վերելք դեպի Արարատ» խորագրով (թերևս՝ խմբագրության դրած) և «Քաղվածքներ Խ. Ա. Օբովյանի նամակից» ենթավերնագրով:

Այդ հոդվածի մասին ցանկանում ենք ավելի մանրամասնորեն խոսել, որովհետև առաջին անգամ էր, որ հայ մամուլը խոսում էր Աբովյանի մասին:

5

Մինչդեռ ռուս ու եվրոպացի գրողների, բնախույզ-գիտնականների ու ճանապարհորդների երկասիրություններում²⁰ և ժամանակի պարբերականներում²¹ երևացած լրատվությունների շնորհիվ Աբովյանի անունը, դեռ երիտասարդական տարիներից, հռչակվել էր Ռուսիայում ու Արևմուտքում, որպես լուրջ պատրաստության տեր մտավորականի, իր հայրենիքը հիմնավորապես ճանաչող անձի ու մեծ հայրենասերի, և գիտական հետազոտությունների նպատակով Անդրկովկաս և մասնավորապես Հայաստան ուղևորվող օտարները, տեղ հասնելուն պես, անհապաղ որոնում, գտնում էին նրան և նրա օգնությունն ու աջակցությունը խնդրում, նույն Աբովյանն իր հայրենիքում, ազգակիցների շրջանում մի տեսակ մեկուսացված էր և անուշադրության մատնված:

Եթե հայ մտավորականները XIX դ. 30—40-ական թթ. դիտումնավոր լռություն էին պահպանում նրա անձի ու գործի վերաբերմամբ ու խուսափում նրանից, ողբերգական անհետացումից հետո անգամ, մի ամբողջ տասնամյակ, գրեթե չհամարձակվեցին մի քանի տող նվիրել նրա պայծառ հիշատակին և անաչառորեն գնահատել հայ ժողովրդի լուսավորության և ազգային նոր գրականության սկզբնավորման համար նրա կատարած վիթխարի գործը: Աբովյանի համար այս անմարդկային իրողությունը աղբյուր ու ակունք էր հոգեկան դրամայի:

Մի անգամ է միայն «բախտ ունեցել» Աբովյանը կարդալու իր անունը մեսրոպյան գրերով ու հայերեն լրագրի էջերում («Կովկաս», 1847, հունիսի

¹⁹ Խ. Աբովյան, Իրիկերի լիակատար ժողովածու, հատ. VII, էջ 136 [182]:

²⁰ Նկատի ունենք Ֆ. Պարրոտի «Ուղևորություն դեպի Արարատ», Մ. Վազների «Ուղևորություն դեպի Արարատ և Հայկական բարձրավանդակ», Կ. Կոխի «Քափառումներ Արևելքում, 1843 և 1844 թվականների ընթացքում», Ֆ. Բոդենշտեդի «Հաղար ու մեկ օր Արևելքում», Ա. Ն. Մուրավյովի «Վրաստան և Հայաստան» և այլոց նմանատիպ գործերն ու հոդվածները:

²¹ Նկատի ունենք՝ «Тифлиссские ведомости», «С.-Петербургские ведомости», «Журнал Министерства народного просвещения», «Библиотека для чтения», «Северная пчела», «Кавказ», «St. Petersburgische Zeitung», «Dörptsche Zeitung», «Dorpaten Jahrbücher», «Göttingische gelehrte Anzeigen» և այլ պարբերականներ:

7, № 23), այն էլ մի աղավաղված լրատվության մեջ, որի ծանուցողներն էին Գաբրիել Պատկանյանը և Կարապետ Շահնաղարյանը:

Լուրը հետևյալն էր.

«Անգղիացի աշխարհաշրջիկն Հենրի Դենբի Սիմուր ի 1846 ամի ի սեպտեմբերի 17 ելեալ է ի մի գազաթանց Մասեաց լերին, և հանդիպեալ ի ճանապարհին նշանացն զորս եղեալ էին Մեծանուն գիտնական վարժապետն Պարրոտ՝ ի 1829 ամի, ճանապարհորդն Վաղներ՝ ի 1842 ամի, և երևելի աշխարհաշրջիկն Արիս՝ ի 1844 ամի, կալեալ է զնոցին շաւիղ, և հասեալ է ի տափարակավայր մի, զոր ի պատճառս մառախլապատ գոլոյ շրջակայից՝ համարեալ է զլուխ Մասեաց, վասնորոյ և ուղեկից նորա Խ. Ա. Աբոյանց պարծանօք խօսի ի նամակի իւրում, թէ առ այս նուագ կամ եղև նախասահմանութեան ինձ շնորհել զերանութիւնն՝ զառաջիւնն նախ համբուրել զնուիրական օթեակ նախահօրն ազգի մարդկան»²²:

Վերելքից ավելի քան ութ ամիս հետո, որպես ուշագրավ (բայց ուշացած) նորութիւն քաղելով այս լուրը Աբովյանի «Նոր վերելք դեպի Արարատ» հոդվածից և ծանուցելով հասարակայնութեանը, կովկասահայ անդրանիկ լրագրի հրատարակիչները թույլ էին տվել մի շարք աղավաղումներ, որոնք թերևս կարելի է բացատրել սնոտիապաշտ ամբոխին հաճոյանալու դիտավորութեամբ:

Նախ՝ Աբովյանն ու Սեյմուրը, հակառակ «Կովկասի» լրատվության, ըսկըսելով իրենց վերելքը 1846 թ. սեպտեմբերի 16-ին, Արարատի գազաթ էին հասել ոչ թե հաջորդ օրը, այլ սեպտեմբերի 18-ին:

Ապա՝ վերելքի ճանապարհին, հակառակ նույն լրատվության, նրանք չէին տեսել Պարրոտից և Վաղներից մնացած որևէ հետք, էլ չենք ասում, որ Վաղներն Արարատ բարձրանալու փորձ ամենևին չէր արել:

Բացի այդ, նախորդ բնախույզներից Ֆ. Պարրոտը և Հ. Արիսը (վերջինիս հետքերով և Հ. Սեյմուրը) Արարատ էին բարձրացել տարբեր կողմերից, հետևաբար նրանք չէին կարող միևնույն ճանապարհն անցած և միևնույն կետին հասած լինել, մանավանդ որ լեռան գազաթը ոչ թե սրածև կոն է, այլ բավականաչափ ընդարձակ մի տարածություն, որի վրա կան մեծ ու փոքր բլուրակներ:

Այնուհետև Արարատի շրջակայքը սկսել էր մառախլապատվել սեպտեմբերի 18-ի կեսօրից հետո, երբ Աբովյանն ու Սեյմուրը արդեն գտնվում էին լեռան կատարին և պատրաստվում էին վայրէջքի, ուստի և, հակառակ նույն լրատուների, նրանք չէին կարող Արարատի բարձրագիւր լանջերից մեկին ընկած ինչ-որ տափարակ շփոթել բուն գազաթի հետ և հրապարակավ ստել:

Վերջապես՝ Աբովյանի ազգանունը «Կովկասի» հրատարակիչները աղավաղել էին: Մինչդեռ «КАВКАЗ»-ը ուսերենի տառադարձությանը հարմարեցնելով՝ օգտագործել էր «Х. А. ОБОБЬЯН» տարբերակը, «Կովկասի» լրագրողները, կարծես շիմանալով, թե այդ ազգանունը հայերեն ինչպես պիտի գրել, տառադարձել էին՝ «Խ. Ա. Աբոյանց», դուրս վանելով նաև «վ» (Աբովյանց) տառը:

Այս բոլորը, սակայն, «անմեղ» չարություններ էին: Միտումնավորությունը հետո էր, «Կովկասի» հենց նույն համարում, վերոհիշյալ լրատվությունից անմիջապես հետո՝ ամփոփված «Լեռոն Արարատ և տապան Նոյի» խորա-

²² «Կովկաս», 1847, հունիսի 7, № 23, էջ 3[91]։

գրով մի անստորագիր հոգովածի մեջ, որը խավարամտության և սնոտիապաշտության ջատագովություն էր ուստ էության և որի հեղինակն, ամենայն հավանականությամբ, Գաբրիել Պատկանյանն էր²³:

Մկղբից մինչև վերջին տողը Արուվյանի դեմ էր ուղղված այն, թեպետ ինչ-ինչ նկատառումներով նրա անունն ուղղակի ձևով չէր բերված և խառնված էր Արարատի գագաթի հին ու նոր հաղթահարողներին, բոլորն էլ մկրտված միևնույն անվանարկիչ կոչումով՝ «իմաստականեր»:

Արտագրելով Աստվածաշնչի հայտնի խոսքերը, թե «Նստաւ Տապանն ի լեւինս Արարադայ» («Մենոնդք», Ը, 4)²⁴, «հայկական հայրենասիրությունից» դրված հոգվածագիրը զարմանք էր հայտնում, «դի ո՛չ հայեցեալ յայս, ալժմեան իմաստակը ոմանք, որք զանձինս առ իմաստունս ունին, ելանեն ի գլուխս լեռանց Արարադայ ի խնդիր նոյեան Տապանի որպէս երբեմն ելին նաև գիտնականքն՝ վարժապետն Պարրոտ և աշխարհաշրջիկն Աբիխ, և այլք ևս, և ալժմ ևս լսի, թէ ելեալ են և այլք (իմա՛ Սեյմուրը և Արուվյանը.— Պ. Հ.): «Եթէ վախճան սոցա է,— շարունակում է անանուն հոգվածագիրը,— սուտ առգրել զԱստուածաշունչ Մատեանն, ղուր են ձիգն և երկունք սոցա.... Իսկ եթէ վախճան սոցա է հերքել ջրել զստուգութիւն պատմութեան Հայոց, որ հիմնեալ յԱստուածաշունչն.... դարձեալ ի նանիւր վաստակէն... յամօթ այնոցիկ՝ որք զապացուցեալ ճշմարտութիւնն կամին ուրանալ: Զի՞նչ կամին ասել իմաստակըս:— Մենք ելաք ի գլուխ Մասեաց, և ո՛չ տեսաք զՏապանն նոյի, ուրեմն չէ անդ, ուրեմն չէ և եղեալ անդ, հուսկ ուրեմն՝ կամ սուտ է գրեալ յԱստուածաշունչն, կամ Մովսէս ի խօսիլն զԱրարադայ՝ ո՛չ խօսի զՄասեաց, այլ զայլ լեռնէ, որ չէ ի Հայաստան»:

Եզրակացությունը պարզ է: Որովհետև հայերից Արուվյանն էր (ու իր աշակերտ Պ. Շարոյանը) երկիցս եղել Արարատի գագաթին, այդ մասին հայերեն ու օտար լեզուներով պատմել ընթերցողներին՝ ո՛չ մի խոսք չասելով նոյան տապանի գոյություն մասին, ուստի և նա էր սուտ հռչակում Աստվածաշնչի քարուղած «հավիտենական ճշմարտությունները», սնանկ հռչակում ազգային պատմության սրբությունները, դավաճանում սեփական հայրենիքին ու ազգին:

Որքան սպառնալից էր հոգվածի սկիզբը, այնքան թունոտ հեղինակը ու արհամարհանքով էին գրված վերջին պարբերությունները: Բերելով զանազան պատճառաբանություններ և մի անգամ ևս անխախտ համարելով Աստվածաշունչի խոսքերը, հոգվածագիրը սոփեստաբանում էր, թե ցարդ Մասիս բարձրացողները «չեն ելեալ յայն գագաթ, յորում Տապանն նոյի գտանի, և թէ ելեալ իսկ են յայն գագաթ, [չեն] փորեալ ուրեք զերկիր»։ Իսկ ապա՝ ուժ առնելով այս «գլուտից» և զգուշացնելով ներկա ու ապագա աշխարհաշրջիկներին՝ «մի՛ ի ղուր աշխատիլ գտանել կամ զլերինն Արարադայ զայն գլուխ, ուր հանգեալ Տապանն, կամ զՏապանն իսկ», զի նոքա «նախախնամութիւնն կամեցեալ է ծածկել ի հետաքրքրութենէ մարդկան»,-- հոգվածագիրը այս ծաղրական «խորհուրդն» էր տալիս նրանց. «...Մի՛ յանդգնաբար ասասցեն՝ թէ չէ անդ Տա-

²³ Այսպես ենթադրելու հիմք է տալիս Գ. Պատկանյանի մի ակնարկը՝ արված հետազայում, երբ այլևս Արուվյանը կենդանի չէր և չէր կարող ճշմարտությունն իմանալ: Տե՛ս նրա «Արարատ» ամսագրի անդրանիկ համարում (1850, սեպտեմբերի 1, էջ 6) զետեղված անխորագիր հոդվածը՝ «Արարատյան լեռի գլուխը...» սկսվածքով:

²⁴ Այսպես կոչված Զոհրապյան Աստվածաշնչում՝ «Եւ նստա՛ւ տապանն յեւթներորդում .ամսեանն ի քսանեւեթն ամսոյն ի լերինս Արարատայ» (Վենետիկ, 1803, էջ 6):

պանն՝ այլ ասասցեն վշտահար, թէ և յայս նուագ ևս աշխատութիւն մեր ելի գերեւս զի ո՛չ մարթացաք զտանել ելանել յայն գագաթ, յորում էր Տապանն Նոյի»։

Դժվար չէ կռահել, որ «Կովկասի» հրատարակիչները անուղղակիորեն սլահանջում էին Աբովյանից գլուխ խոնարհել «աղղային հայրենասիրությանը» ղորություն տվող սրբությունների առջև, շմտածելով անգամ, որ մարդկության հոգևոր զարգացումը և որոնող միտքը սնունդ են հռչակել դրանք. ենթադրվել սնոտիապաշտ ամբոխի կամքին և, հակառակ իրականության, հրապարակորեն վկայություն տալ տապանի գոյության և գիտության անղորության վերաբերյալ. հանուն անձնական ապահովության՝ մեղանշել ճշմարտության և արդարության առջև։

Աբովյանը տեղի չտվեց, Եվ ինչպե՞ս կարող էր, երբ դա կլիներ հրաժարումն տարիներ շարունակ իր գրած, հրատարակած ու քարոզած գաղափարներից, կլիներ ամենամեծ վիրավորանքը իր սիրելի ուսուցչի՝ Ֆրիդրիխ Պարրոտի հիշատակին, որի անունը հայ մանուկների սրտերում հավերժացնելու համար վերջին տարիներին կաղմել էր նրա հանրամատչելի կենսագրությունը և իրենց 1829 թ. Արարատյան վերելքի պատմությունը, որից, դժբախտաբար, մի պատահիկ է սոսկ մնացել, իսկ մնացած գլուխները 1897 թվականից հետո անհայտ անձինք գողացել են Աբովյանի ձեռագրերի պահարանից։ Մեր բոլոր որոնումները առայժմ արդյունք չեն տվել²⁵։

Հայտնի է նույն 1847 թ. աշնանը, Երևանում, փոստապետ Հ. Քալանթարյանցի հետ Աբովյանի բռնած գրադը և ապա՝ նախապատրաստությունները (Բլավատսկու հետ միասին) հաջորդ, 1848-ի ամռանը Արարատի գագաթ բարձրանալու համար, որ խափանվեց Աբովյանի ողբերգական մահվամբ։ Գրադի շարժառիթների ու պայմանների մասին Աբովյանը գրած է եղել հոգված՝ «Ученный спор в Эривани 18 ноября», թերևս «Кавказ»-ում տպագրելու և հակառակորդներին հակահարված տալու համար, բայց ինչ-ինչ պատճառներով այդ ևս լույս աշխարհ չի եկել, իսկ ձեռագիրն էլ, որ մինչև 1897 թ. պահվում էր Աբովյանի գիվանում, անհայտացել է խորհրդավոր կերպով։

Այդ ամենի մասին ավելի մանրամասն կխոսենք այլ առիթով։

«Կովկասի» վերոհիշյալ հոգվածի հրապարակումից հետո Աբովյանը խղեց հարաբերությունները Գաբրիել Պատկանյանի հետ և նրա անունն ընդմիշտ չնչեց իր բարեկամների շարքից։ Տարիներ անց, վերհիշելով այս անցքերը, Պատկանյանը չքմեղանում էր՝ թյուրիմացության պատճառ համարելով Աբովյանի աղգանվան սխալ գրությունը, որ իբր Կարապետ Շահնաղարյանցի հարկադրանքով էր արվել։ Բավական մանվածապատ ձևով նա այս ամենը պատմում է իր Հիշատակարանի այն մասում, որ վերաբերում է իր և Ներսես Աշտարակեցու զժտությունը և Կարապետ Շահնաղարյանցի փորձին՝ հաշտեցնելու նրանց։

²⁵ Ն. Տեր-Կարապետյանն իր գրքում («Խաչատուր Աբովյան», Տփղիս, 1897, էջ 135) մեջ է բերել այդ գործի մի երկու գլխի խորագիր՝ այլ նյութերի հետ խառը. «Պարրոտ, Ղոնաղություն, Քրիստոսի ծնունդը, Տարեմուտ, Քաղումն, Հայրենասիրություն, Պարրոտի բնությունը, Պարրոտի գրությունը»։ Վերջիններն ամփոփված են եղել մի քառածալ դավթարում և եղել են աշխարհաբար։ Այդ բնույթի մի պատահիկ տպագրել ենք ևս. Աբովյանի երկերի VII հատորում, «Հատված Զ. Պարրոտի կենսագրությունից» խմբագրական խորագրի տակ, ուր Ակոռիի Սբ. Հակոբի վանահայր Կարապետ վարդապետի բնութագիրն է տրված (տե՛ս էջ 211—214)։

«Սրբազան վեհապետն հրամայեց ինձ,— ասում է Գ. Պատկանյանին Կ. Նահանգարքանցը,— որ դա՛մ վերահասություն գործեմ և թե հնար է՝ ձեզ հաշտեցնեմ: Տեր Գաբրիելն պատասխանեց. եթե իմ ճանաչած վեհապետն է, նա քեզ այդպիսի ինչ չէր ապսպրեր, մանավանդ՝ ուր ես կամ. իսկ թե յուր բնությունն փոխել է, լավ է, որ ինքս կերթամ, յուր բերանեն կլսեմ և պարտուպատշաճ պատասխան կուտամ: Խռովարար և շփոթարկու արեղային հաշտարար չի կարգիր Ներսեսն, և թեև յերկնից ակնարկություն ունենա:

Կարապետ վարդապետն բարկացավ և ասաց. Ի՞նչպես կհամարձակիս ինձ խռովարար ու շփոթարկու կոչել: Տեր Գաբրիելն պատասխանեց. Ի մանկութենեմ սովորել տանձն տանձ կոչել, և խնձորն՝ խնձոր: Ես քո արածն պատմեմ, հետո դու ասա, թե այդպիսի բան անողի անունն եթե շփոթարկու և խռովարար չէ, ապա ի՞նչ է:

Կարապետ վարդապետն ասաց. դու Աբովյանի՞ բանն ես հիշում: Աբովյանի բանն եղել էր Հովակիմա սպասավորությամբ, և տեր Գաբրիելն քանիցս պատմել էր Ավետիքին: Վասնորո, երբ Կարապետ վարդապետի հարցման վերա Ավետիք ասաց. Գավազանն որ շարժեն, գող շունն կխուսափե, Հովակիմ բարձրաձայն ծիծաղեցավ: Տեր Գաբրիելն ասաց. Հայր սուրբ, թե խռովարար և շփոթարկու չէիր, ես Աբոյեվ տեսել էի, և Աբոյեվ թարգմանել էի, ի՞նչ պատճառով դու փոխել տվիր Հովակիմին երկու անգամ, հրամայելով՝ որ Աբոյեվի տեղ Աբովյան դնե: Եթե Աբոյեվն սխալ էր, պակասությունն իմա էր և հանցանաց պատասխանատուն ես էի. քեզ ի՞նչ փուլթ էր, որ այն ողորմելին մինչև ի մահ դիս յուր թշնամի համարեցավ: Ես ասացի, թե եթե Աբոյեվն անշուշտ պիտի Աբովյան գրվի, ես չուզեմ, որ իմ հողվածս տպվի, դու դարձյալ քո կամապաշտությունն կատարեցիր. այժմ ի՞նչ հաշտություն պիտի մեր մեջ տարրացնես...»²⁶:

Պատկանյանը շատ բան խառնում ու շփոթում է դիտավորյալ, Աբովյանի դառնանալու առիթը համարելով այդ շնչին բանը: Բայց Աբովյանը մանրախրնդիր անձ չէր և ո՛չ էլ այնքան միամիտ, որ չհասկանար, թե ինչ նպատակ էր հետապնդում «Լեառն Արարադ և տապան Նոյի» հողվածը: Չմոռանանք ասել, որ 1846—1847 թթ. ընթացքում «Կովկասի» էջերում առհասարակ չի տպագրվել Աբովյանին առնչվող մեկ այլ հողված, ինչպես և նրա ազգանունը 1847 թ. 23-րդ համարից բացի ուրիշ տեղ չի պատահում:

ПОСЛЕДНЕЕ ВОСХОЖДЕНИЕ АБОВЯНА НА АРАРАТ

Доктор филол. наук П. О. АКОПЯН

(Резюме)

Последнее восхождение Абовяна на Арарат, которое до сих пор обстоятельно не исследовалось ни биографами самого Абовяна, ни историками географического изучения Армянского нагорья, было осуществле-

²⁶ Գրականության և արվեստի թանգարան, Գ. Պատկանյանի Հիշատակարան, էջ 295: Մեջբերված հատվածում հիշված անձնավորություններից Ավետիքը (Տեր Մկրտչյան— Պ. Հ.) ազուլեցի վաճառական էր, իսկ Հովակիմը երևանցի էր, տպարանական գործին ծանոթ անձնավորություն: Զրույցը Գ. Պատկանյանի և Կ. Նահանգարքանցի միջև տեղի է ունեցել մոտավորապես 1850 թ. (տե՛ս նույն տեղը, էջ 300 և 312):

но 18 сентября 1846 г. совместно с английским путешественником лордом Г. Д. Сеймуrom.

Существует мнение, будто Сеймуrom была опубликована об этом восхождении книга, в которой содержатся неизвестные факты об Абовяне. Некоторые литературоведы даже писали об армянском переводе данной книги, изданной якобы в 1877 г., и о ее роли в истории абовяноведения. Автор считает, что это ошибочное утверждение является результатом превратного толкования одной библиографической справки английского географа Линча. Сеймур никакой книги об Араратской экспедиции 1846 г. не публиковал; существует лишь одно краткое интервью, данное им впоследствии редактору Лондонского «Альпийского журнала» (1877 г.), где об Абовяне вообще ничего не говорится. В статье приводится это интервью Сеймура с соответствующими комментариями.

Далее в хронологической последовательности восстанавливаются маршрут и подробности данного восхождения.

Заключительная часть статьи посвящена той анонимной полемике, которую вела в 1847 г. армянская газета «Կոճիշ» против Абовяна в связи с его статьей «Новое восхождение на Арарат».